ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» հոկտեմբերի 2024թ. № 993

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 965 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 965 որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ պարբերություններում տեխնիկական վրիպակների պատճառով «շնորհավորական բացիկներ» բառերի փոխարեն սխալմամբ գրվել են «դեկորատիվ կամարներ, եղնիկներ, կառքերի ձևավորման պարագաներ», իսկ «տորթեր, շոկոլադե կոնֆետների հավաքածու» բառերի փոխարեն սխալմամբ գրվել են «աշխատանքներն իրականացնելու նպատակով ծառայություն» բառերը՝ ***որոշում եմ.***

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 965 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

« 1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի՝

1) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 27 600 ՀՀ դրամ՝ շնորհավորական բացիկներ ձեռք բերելու համար.

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 409 280 ՀՀ դրամ՝ տորթեր, շոկոլադե կոնֆետների հավաքածու ձեռք բերելու համար»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 15
ք.Սպիտակ